կերէն Ասլանխանայ կոչեն, զոր արկեալ են
ի ներս բազում եւ ազգի ազգի գազանս, եւ
170 կայր ամէն մատուռումն ազգ մի գազան. այլ
եւ առիւծ, ինձ, ծովային կատու, վաշխ
եւ այլն: Զայն իբրեւ տեսի ես՝ յարտասուս
հարեալ յոգոց հանի եւ ասեմ. Տէր իմ ընդէ՞ր
մտին հեթանոսք ի ժառանկութիւն քո,
175 եւ պղծեցին զտաճար սուրբ քո: Ընդէ՞ր քա-
կեցեր զցանկ սորա եւ հայհոյեն զսա անցա-
ւորք: Ապականեցին զդա խոզք եւ երէք վայ-
րիք. եւ պատառող գազանք արածին եւ կե-
րակրին ի սմա: Եւ զսեղանս քո կործանեցին
180 եւ մեք եղաք ծաղր եւ այպն կատականաց,
այլ եւ նախատինք դրացեաց մերոց. եւ ոչ ոք
է որ պատվէ կամ նորոգէ զսա: Եւ դարձեալ
յարեւելս կոյս ասեմ. Տէր Աստուած զօրու-
թեանց, դարձ հայեաց եւ տես. այց արա՛
185 այգոյս այսմիկ եւ դարման. զի սա է հարան
քո եւ մայր մեր, զոր պսակեցեր պատվական
արեամբ քով սրբով. եւ փառօք զարդարեալ
պճնեցեր եւ տուն աղօթից կոչեցեր: Եւ
ընդէ՞ր ես ոչ կորայ կամ մեռայ, քան թէ
190 տեսի այսպիսի աղէտ զտուն կսկծանաց աչօք
իմովք: Վա՜յ ինձ, վա՜յ ինձ. զիա՞րդ այժմ
անարգեալ եւ զսրովեալ յանօրինաց է. եւ
դու զիա՞րդ լռես եւ համբերես: Եւ ի միտս
իմ երկրպադութիւն մատուցեալ Աստուծոյ՝

171 այլ եւ այլ: — 177 յէրէք: — 185 յայգոյս յայսմիկ: — 194 յերկրպադութիւն: